Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/7334/02/23

ՎՃԻՌ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

05.05.2023թ. քաղաք Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), հետևյալ կազմով՝

նախագահությամբ՝ դատավոր Ս. Երիցյանի

գրավոր ընթացակարգով քննելով քաղաքացիական գործը, ըստ հայցի <<Ցենտռա Կոլ>> ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01299858, գրանցման համար՝ 271.110.1115109, հասցե՝ ք. Երևան, Էստոնական 25 փ., բն. 62-63) (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ԱՄՄՀԼԿՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-23/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (հասցե՝ Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, գ. Նորապատ, 5 փ. 11) (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ որոշումն ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու պահանջի մասին,

ՎՃՌԵՑ

1. <<Ցենտռա Կոլ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ԱՄՄՀԼԿՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-23/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ որոշումն ոչ իրավաչափ և անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել՝

ոչ իրավաչափ և անվավեր ճանաչել թիվ ԱՄՄՀԼԿՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-23/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.02.2023 թվականի № 2 արձանագրային որոշումը՝ <<Ցենտռա Կոլ>> ՍՊ ընկերության հայտը 2-րդ, 3-րդ, 5-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ չափաբաժինների մասով անբավարար գնահատելու և մերժելու մասով:

2. ԱՄՄՀԼԿՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-23/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովից հօգուտ <<Ցենտռա Կոլ>> ՍՊԸ-ի բռնագանձել 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամ, որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

ԱՄՄՀԼԿՀՈԱԿ-ԳՀԱՇՁԲ-23/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովից հօգուտ <<Ցենտռա Կոլ>> ՍՊԸ-ի բռնագանձել 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ, որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**